բած գրութեանս պատճէնը կ'դնեմ այստեղ՝, որ է ըստ այսմ օրինակի :

յԱռաջնորդէ Հայոց Շամախւոյ թեմի
Հմ- 231 . ի 1 սեպտ . 1888

Բարձրապատիւ Մակար վարդապետի Բարխուդարեանց .

Վեհ. Կաթուղիկոս ամենայն Հայոց Տ. Տ. Մակար կոնդակաւ իւրով ի 6 ապրիլի տարւոյն հմ. 146 . հաստատելով զկանոնադրութիւն Բուդաղեան վանական երկդասեան դպրոցին Սաղիանի վանից բարեհաճի թոյլատրել բանալ զայն դպրոցն յառաջիկայ սեպտեմբերի համաձայն կանոնաց եկեղեցական դպրոցաց մերոց , և ըստ որում արդէն գրաւոր բանակցութիւն մեր ընդ ձեզ վերջացեալ է համաձայնութեամբ , և եկեալ հասեալ էք ի վանս անդր Սաղիանի և ժամանակ սկսանելոյ ուսման ի դպրոցին մերձեալ է , ուստի ընդ գրութեանս յանձնելով Ձեզ զպատճէն կանոնադրութեանն այնմիկ՝ հաստատեմք զձեզ ի պաշտաման կրօնուսուցչի և տեսչի այնր դպրոցի , առ որ և առաջադրեմք Ձեզ՝ խորհրդակցութեամբ ընդ արդէն վարձեալ ուսուցչի ռուսաց լեզուի պ. Սահակայ Տէր Գրիգորեանց՝ տնօրինել Ա. ընդունել զխնդրագիրս ծնողաց կամ բարեկամաց աշակերտաց հանդերձ առաջին կիսամեայ թօշակագրամօք , որ է երեք ռուբլի , զորս և յետ լրման ընդունելութիւն աշակերտացն , յանձնել գանձապահ հոգաբարձուի այնր դպրոցի , որ է Սահակ քահանայ Սաղիան գեղջ , վասն գրելոյ ի պատշաճաւոր տօմարին , իսկ վկայեալ աղքատաց որդիս ընդունել ձրիաբար , և այն զմին՝ ի տասանց , որոց վկայութիւնն պարտի լինիլ ի տեղական քահանայէն :

Բ. Զընկալեալ աշակերտսն հարցաքննել և ըստ այնմ բաժանել յերկուս կարգս , այն է յԱ. և Բ. բաժանմունս , որոց և ըստ բաժանմանցն տալ դասագիրս և զուսումնական պիտոյս :

Գ. Որպէս արդէն , յայտնի է Ձեզ գրագրութեամբն , տարեկան ռօճիկ և սնունդ բարձր Արժանապատուութեան ձերոյ սահմանեալ է չորս հարիւր ռուբլի , այլեւ տուն վասն բնակութեան , և ծառայ : Իսկ եթէ կամք իցեն ձեզ սեղանակցիլ